



ՄԱՐԻԵՏԱ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

*ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության
ամբիոնի դոցենտ,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու*

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության
ամբիոնի դոցենտ,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու*

ՀԱՅԵՐԸ ԵՎ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցի նախօրեին ընթերցողի սեղանին է դրվել հրապարակախոս, ճանաչված տնտեսական մշակութաբան Խաչատուր Դադայանի երկլեզվյա՝ հայերեն և թուրքերեն աշխատասիրությունը¹:

Նա հեղինակ է ավելի քան 10 մենագրության, որոնց թվում են՝ «Հայերը և Բաքուն. 1850-ական թթ. – 1920 թ.» (2006), «Ալեքսանդր Մանթաշյանց. հուշագրություններ, հոդվածներ, փաստաթղթեր» (2011), այլ աշխատությունների և առևտրատնտեսական բնույթի բազմաթիվ գիտական, հանրամատչելի հոդվածների ու հոդվածաշարերի՝ նվիրված հայոց տնտեսական մշակույթի պատմության հիմնարար հարցերի քննությանը: Խ. Դադայանի արժեքավոր հետազոտություններով մեզանում սկիզբ դրվեց հայագիտության ոլորուն, տակավին երիտասարդ բնագավառներից մեկի՝ հայոց տնտեսական մշակույթի պատմամշակութաբանական ուսումնասիրությանը:

Ներկայացվող աշխատանքը ժամանակակից Թուրքիայի տարածքում հայերի տեղական տնտեսական գործունեության մասին նյութերի համապարփակ ժողովածու է, որն ունի աղբյուրագիտական ծանրակշիռ նշանակու-

¹ Հայոց առևտրատնտեսական գործունեությունը ներկայիս Թուրքիայի տարածքում 15-րդ դ. – 1915 թ.: Փաստերի ժողովածու /կազմ. Խ. Դադայան/, Եր. , «Գասպրինտ», 2012, 99 էջ:

թյուն: Աշխատությունը կոչված է նպաստելու հայոց հնագույն տնտեսական մշակույթի պատմության ցայսօր բաց մնացած էջերից մեկի լրացմանը և գիտականորեն կրկին հաստատելու, որ հայ ժողովուրդը մարդկության հնագույն քաղաքակրթական արժեք համարվող տնտեսական մշակույթի առաջին ստեղծողներից, կրողներից ու զարգացնողներից է Առաջավոր Ասիայում²: Աշխատությունն ունի նաև ընդհանուր ճանաչողական և փոխճանաչողական նշանակություն:

Ժողովածուն ընթերցողին է ներկայանում հայկական հնագույն գաղթօջախի, հայերի մշակութային ու հոգևոր կյանքի կենտրոնի՝ «հայոց» Կոստանդնուպոլսի կազմավորման համառոտ պատմության և Թուրքիայի տնտեսական կյանքում դրա ունեցած կարևոր դերակատարումը բացահայտելով: Նյութը եզրափակվում է Երեմիա Չէլէպի Քէօմհիրձյանի «Ստամպոլոյ պատմութիւն» ստեղծագործությունից մեջբերված տնտեսական բովանդակությամբ գեղեցիկ հատվածով:

Աշխատության առաջին՝ «**Բնակավայրեր**» բաժնում գետեղված են հետաքրքիր նյութեր Թուրքիայի 40 քաղաքներում հայերի իրականացրած առևտրատնտեսական գործունեության վերաբերյալ: Հմտորեն օգտագործելով հարուստ փաստական նյութը՝ հեղինակը խճանկար - համայնապատկերի տեսքով ներկայացրել է այդ բնակավայրերի բուռն տնտեսական կյանքը՝ աշխատավոր, ստեղծարար հայ մարդկանցով, բազմատեսակ, նաև ժառանգական - գերդաստանական արհեստագործությամբ ու զբաղմունքներով, տարատեսակ ապրանքների առևտրով, աշխույժ, կոլորիտային շուկաներով ու տոնավաճառներով, ներքին ու արտաքին ամուր առևտրատնտեսական կապերով, նյութական ու ֆինանսական հարստությամբ: Առանձնակի հոգածությամբ է պատկերված հայ գործարարն իրեն հատուկ առաքինի, մարդկային որակներով ու արհեստավարժությամբ, կենցաղային նորամուծություններով, ձեռնարկումներով ու առևտրական կապերով, փոխատվական ու հաշտարար ծառայություններով, բարեգործություններով և, ի վերջո, բարեկեցությամբ, գեղեցիկ, հայեցի բարքերով ու սովորույթներով, հոգևոր հետաքրքրություններով: Հատկապես մանրամասն են ներկայացված որոշ քաղաքներ: Այսպես՝ դեռևս 1400 թ. սեբաստացիները հիմնադրել են **Տոնիկաշենը** (Ադաբազար)՝ ծխախոտի մշակությամբ, շերամապահությամբ ու ծաղկանոցներով: Հռչակավոր էր **Ակնը** (Քեմալիյե) իր խնայասեր, ինքնուրույն գործելու և նախաձեռնողական ոգով օժտված մարդկանցով: Հայտնի էր **Անկյուրան** (Անկարա)՝ այծի բրդով (բրոն), հնարամիտ, համարձակ, աշխատավոր ու մանավանդ առևտրում խիստ հաջողակ մարդկանցով, իր հայտնի թատրոնով և այդտեղ պարբերաբար կազմակերպվող պարահանդեսներով: **Արաբկիրը** նշանավոր էր իր մանուսագործներով (մանուսա՝ բամբակե գործվածք) ու մանուսավաճառներով, որոնք տարեկան 50.000 ոսկի եկամուտ էին ստանում, **Բաբերդը** (Բայբուրդ)՝ տոնավաճառներով ու ոսկերիչներով, որոնց պատրաստած զարդերը տանում էին վաճառելու հեռավոր երկրներում: **Բրուսայում** (Բուրսա) ավելի քան 50 մետաքսագործական ֆաբրիկա կար, **Եվդոկիան** (Թոքատ) հարուստ էր թռչուն, ծաղիկ, արվեստ, վայելք սիրող նրբակենցաղ մարդկանցով: Վաճառաշահ, ծովափնյա **Ջմյունհայի** (Իզմիր)

² Այս մասին տե՛ս նաև Ս. Հայրապետյան, Տնտեսական մշակույթը Հին և Միջնադարյան Հայաստանում // Գլոբալացվող աշխարհը և հումանիտար կրթության ու գիտության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Նոյան տապան», 2007, էջ 343-371:

հայ վաճառականներն իրենց հանձարով և ունակությամբ անգլիական ու հունական ֆիրմաներին ստիպել են դադարեցնել գործունեությունը: **Կարինը** (Էրզրում) ճանաչված էր որոշակի վարքականոնով գործող ավանդապահ վաճառականներով, **Կեսարիան** (Կայսերի)՝ գորգագործությամբ, որը տարեկան, միջին հաշվով, 35-40.000 ոսկի էր ապահովում, ինչպես նաև իր քաղաքին համբավ բերող ապուխտով: **Կուտինան** (Քյոթահիյա)՝ Կոմիտասի ծննդավայրը, աչքի էր ընկնում հախճապակու արտադրությամբ, որի արտադրանքը հարգի էր նաև ԱՄՆ-ում: **Մալաթիայի** վաճառանշաններն էին հայկական ծիրանը, տանձն ու խնձորը, որոնք մեծ համբավ էին վայելում եվրոպական խոշոր քաղաքներում: Քնքուշ, բանաստեղծական անունով **Չմշկածագը** հպարտ էր ի բնե գործունյա, արհեստավոր և ուսումնասեր իր մարդկանցով, հռչակավոր **Ռոդոսթոն** (Թեքիրդաղ)՝ հայերին պատկանող շքեղ առանձնատներով, ադամանդի և թանկագին այլ քարերի նշանավոր վաճառական Պողոս Փափազյանով, ով նաև հեռագրային ու հեռախոսային սարքերի պետական մատակարար էր: **Սեբաստիան** (Սիվաս) առանձնանում էր իր հանքերով, Աղծովով և բազմաթիվ իջևանատներով, իր ազդեցիկ Օհան Ասլանյանով, ով հայտնի էր իշխանավայել առատածեռնությամբ ու հատկապես բարեսիրությամբ: Եվ ինչպես չիիշատակել, որ տնտեսական մի ծանր ձգնաժամի ժամանակ հարյուրավոր անոթի գյուղացիների համար գործ հայթայթելու նպատակով նա հրամայում է քանդել Ճեհրիի իր ընդարձակ ագարակի պարիսպները և նորից կառուցել:

Երկրորդ՝ **«Մարդիկ»** բաժնում խոսվում է Թուրքիայի տարածքում առևտրատնտեսական գործունեություն ծավալած 28 նշանավոր հայերի, այդ թվում՝ հայտնի Գյուլբենկյան, Եսայան, Մուրադյան, Տատյան գործարար տոհմերի, ըստ էության, հայ գործարար ընտրախալի ներկայացուցիչների մասին: Օգտագործված բազմաբնույթ նյութերը հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու թուրքական պետությանն ու տնտեսությանը հայերի մատուցած ծառայությունների, հասարակական գործունեության, գործարար ու մարդկային անուրանալի որակների, մշակութային, գիտակրթական, տեխնիկական ձեռնարկումների, ազգանպաստ, բարեգործական նախաձեռնությունների, միջազգային տնտեսական կապերի զարգացման գործում ունեցած ակտիվ մասնակցության վերաբերյալ: Այսպես՝ **Պետրոս Գափա-մաձյանը** (1840-1912) Վանա լճի վրա 1910 թ. շոգենավային նավարկություն է հիմնադրել: **Քերովբե Զիլձյանը** (1829-1911) սեփական պարտեզում կառուցած գործարանում պատրաստել է ծնծղաներ, որոնց ծովման եղանակը ընտանեկան 200 տարվա գաղտնիք էր: Դրանք հնչողությամբ և որակով գերազանցում էին եվրոպական տեսակներին և բազմաթիվ ցուցահանդեսներում արժանացել էին տարբեր մրցանակների: **Հովհաննես Մյուհենտիսյանը** (1810-1891) 1844-ին հեղինակել է թուրքական լիրայի զարդանախշերը և թղթադրամի մակագրությունները: **Աստվածատուր Զունդը** (1825-1897) երիտասարդներին եվրոպական առաջնակարգ համալսարաններում կրթության ուղարկելու համար հարյուր հազար ֆրանկ դրամագլխով ստեղծել է **«Զունդ»** հիմնադրամը: Մեկ այլ հայտնի գործարար՝ **Գևորգ Մուրադյանը** (1819-1901), տեղեկանալով, որ իր մի հույն պարտատեր մեկնել է Հունաստան և մահացել, Աթենքում ապրող նրա ընտանիքի անդամներին վճարում է պարտքը՝ տոկոսներով: Սա բացառիկ փաստ է առևտրի տարեգրության մեջ: Նրա որդին, որ նույնպես գործարար էր, Թուրքիայից գաղթել էր Եթովպիա և Ադիս Աբեբա-

յում կառուցել Ս. Գևորգ եկեղեցին՝ հոր հիշատակին: Հիշյալ գործարարներից շատերն իրենց մտավոր բարձր կարողությունների և բարոյական որակների շնորհիվ զբաղեցրել են կարևոր պետական պաշտոններ և հասարակական դիրք, արժանացել ոչ միայն թուրքական կառավարության, այլև օտար պետությունների (Պարսկաստան, Ֆրանսիա և այլն) խրախուսանքներին ու պարգևներին:

Երրորդ՝ **«Զեռնարկություններ»** բաժնում հեղինակը պատմում է 28 հայապատկան ֆիրմաների, գործարանների, ֆաբրիկաների ու միությունների մասին, որոնք հիմնադրվել են 19-րդ դ. երկրորդ կեսին և 20-րդ դարասկզբին: Ղրանց գործունեությունը, ստեղծած նյութական և ֆինանսական հարստությունը, արտասահմանի հետ հաստատած տնտեսական կապերը, տեխնիկական և տեխնոլոգիական նորամուծությունները վկայում են սեփականատերերի գործարար և մարդկային լավագույն հատկանիշների մասին:

«Ամասիայի ավտոմոբիլային ընկերությունը» 1910 թ. գործընկերների միջոցով Ամերիկայից ստացել է առաջին ավտոմոբիլը: Ընկերությունը զբաղվում էր նաև Եվրոպայից հեծանիվներ ներկրելով: **«Արմաշի շահակցական սպառողական միությունը»** բանվորների մասնակցությամբ ձևավորել էր դրամագլուխ և տնտեսական ասպարեզում պաշտպանում էր նրանց շահերը: **«Բարիկանների մետաղաձուլական գործարանը»**, Ամերիկայից բերելով արդիական սարքավորումներ, հասել էր նկատելի հաջողությունների: Այս ձեռնարկությունը պատրաստում էր գյուղատնտեսական գործիքներ, որոնք լայն սպառում ունեին ոչ միայն Խարբերդի նահանգում, այլև Թուրքիայի այլ վայրերում: **«Իբրանոսյան եղբայրներ»** առևտրային տան Եփրեմ և Մարութ Իբրանոսյանների ֆիրման եղել է արևմտահայերի՝ 19-րդ դ. կեսերի և 20-րդ դարի առաջին տասնամյակների ամենախոշոր առևտրաարդյունաբերական ձեռնարկությունը: Նրանք հիմնադրել են նաև «Իբրանոսյան առևտրային վարժարանը», որի շրջանավարտներն աշխատանքի են անցել ֆիրմայի գանազան մասնաձյուղերում: Մինչև 1915 թ. Իբրանոսյան եղբայրների ընդհանուր դրամագլուխը կազմում էր 500.000 օսմանյան ոսկի: Մեզիրեի **«Ֆաբրիկատորյան առևտրային տան»** մանվածքի ֆաբրիկայի արտադրանքը Լիոնի, Մարսելի, Փարիզի, Բրյուսելի միջազգային ցուցահանդեսներում արժանացել է մեդալների, որոնք պատկերված էին ֆիրմայի ձևաթղթի գլխամասում: Այս հաստատության հիմնադիր **Գրիգոր Ֆաբրիկատորյանը** որդին էր արաբկիրցի Կարապետ Իփեքչյանի: Երբ նա հիմնում է եվրոպական սարքավորումներով ֆաբրիկա, ժողովուրդը նրան սկսում է կոչել ֆաբրիկատոր, ինչի արդյունքում ազգանունը փոխվում է Ֆաբրիկատորյանի: Գ. Ֆաբրիկատորյանի հաջողությունը պայմանավորված էր բնատուր տաղանդով, ինքնակրթությամբ և մեծ աշխատասիրությամբ: Ֆաբրիկատորյանների տեքստիլ ֆաբրիկան, որն աշխատել է մինչև 1915 թ., եզակի ձեռնարկություն էր Օսմանյան կայսրությունում:

Չորրորդ՝ **«Ֆինանսներ և ֆինանսիստներ»** բաժինը նվիրված է հայերի կազմակերպած 22 ֆինանսավարկային հաստատությունների լուսաբանմանը: Օրինակ՝ **Օսմանյան առևտրային բանկն** ակտիվ դերակատարություն ուներ Թուրքիայի ֆինանսական կյանքում: Հեղինակը մանրամասնորեն անդրադարձել է նաև հայ ֆինանսիստների գործունեությանն ընդհանրապես: Իրենց մտավոր ներուժի և ֆինանսական մեծ կարողությունների շնորհիվ նրանք ոչ միայն բանկային գործի գիտակներ են եղել, այլև բարձր պաշտոն-

ներ ու դիրք են զբաղեցել թուրքական կառավարության և հասարակության մեջ՝ միաժամանակ ակտիվորեն զբաղվելով ազգանվեր ու բարեսիրական գործունեությամբ: Այսպես՝ շինարար-ճարտարագետ **Գևորգ Ասլանյանը** (1849-1922) կառուցել է հայոց պատրիարքարանի նոր շենքը: **Մկրտիչ Ճեզայիրյանը** (1805-1861) մեծ դերակատարություն է ունեցել թուրքիայում գյուղատնտեսությունն ու մետաքսագործությունը գիտական հիմքերի վրա դնելու գործում: **Մկրտիչ Միրիջանյանը** (1742-1800) Կ. Պոլսում 1790 թ. հիմնադրել է առաջին հայկական վարժարանը, եկեղեցասիրության և կրթանվեր գործունեության համար ստացել է «Շնորհք» մականունը: **Հարություն Պեգձյանը** (1771-1834)՝ ժամանակի ամենահարուստ արևմտահայը, շուրջ 250.000 ոսկի է տրամադրել բարեգործական նպատակով: Թուրքիայում մեծ համբավ է վայելել **Տյուզյան** գերդաստանը (տյուզձի՝ ոսկի շարող, հավաքող բառից): Գերդաստանի ներկայացուցիչներ **Սարգիս, Միքայել, Կարապետ Տյուզյանները** տարբեր ժամանակներում եղել են արքունի ոսկերչապետեր: **Միքայել Փորթուզյանը** (1842-1897) Հակոբ փաշա Գազազյանից հետո զբաղեցրել է սուլթանի անձնական ֆինանսների տնօրենի պաշտոնը:

Հինգերորդ՝ «**Գովազդներ**» բաժնում ներկայացված են հայերին պատկանող շուրջ 60 գեղարվեստորեն ձևավորված գովազդապատկերներ՝ համառոտ բնութագրումներով: Դրանք հավաստի տեղեկություններ են պարունակում օտարերկրյա բազմաթիվ ապահովագրական ընկերությունների գործունեության մասին: Այս բաժնին վերաբերող մեր խոսքն ավարտենք «**Մ. Հովակիմյան**» առևտրային տան տպարանի տիրոջ՝ 1914 թ. ազգակից վաճառականներին ուղղված գովազդ-կոչից մեջբերմամբ. «Աշխատասիրություն, հարատևություն և տնտեսագիտություն՝ ահա գեղեցիկ մի երրորդություն, որին այսուհետ պիտի փարվենք և ի սպաս դնենք մեր ամբողջ եռանդը, որպեսզի տարեցտարի հարգ ու հեղինակություն վաստակենք օտար շուկաներում և արդիական ոգի հաղորդելով մեր գործառույթներին՝ ապահովենք տնտեսական լավ դիրք՝ ազգերի մեջ շեշտվելու համար»: Սա մի կոչ էր, որն, ավա՛ղ, Թուրքիայում չէր կարող կյանքի կոչվել հետագա ողբերգական իրադարձությունների պատճառով: Բայց սա արդիական է բոլոր ժամանակներում. ուժը չի կորցրել հարյուր տարի անց և օգտակար խորհուրդ է նաև մերօրյա գործարարների համար:

Խ. Դադայանը գրքի սկզբում նշում է, որ բուն նպատակը զանազան աղբյուրներից քաղված փաստերի վերաշարադրանքն է՝ առանց մեկնաբանությունների՝ հետևություններն ու եզրակացությունները թողնելով ընթերցողին: Ինչ խոսք, նշված ուսումնասիրությունը առիթ է տալիս հեռուն գնացող բազմաթիվ մեկնաբանությունների ու հետևությունների: Սակայն, բնականաբար, կարող է օրինական հարց առաջանալ, թե ինչ եղան այդ աշխատավոր, խելացի հայ մարդիկ, ավելի քան 500 տարվա ընթացքում նրանց ստեղծած նյութական և ֆինանսական հսկայական կարողությունները, հարուստ տնտեսական մշակույթը: Դրա պատասխանը բխում է աշխատանքի բովանդակության ներքին տրամաբանությունից և դրոշմված է գրքակազմի վրա. «ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ ԵՎ ԵՂԱՎ ԽԱՎԱՐ»:

Այստեղ տեղ են գտել նաև հայ-թուրքական պատմատնտեսական համագործակցության փաստեր՝ հավանաբար ներքին մի հույսով, որ դա դրական ազդեցություն կունենա Թուրքիայում հասարակական գիտակցության և հոգեբանության դրական տեղաշարժի առումով և հայ-թուրքական հարաբերու-

թյուններում նոր դռներ կբացի: Սա հեղինակի կողմից արված բարոյական մեծ քայլ է. թե ինչպես կընկալվի և ինչ արձագանք կունենա թուրք ընթերցող հասարակության կողմից, ցույց կտա ամենագոր ժամանակը:

Աշխատանքը կարևորվում է ոչ միայն տնտեսական մշակույթի պատմության հարցերի ուսումնասիրությամբ, այլև ունի պատմագիտական, քաղաքագիտական, իրավագիտական և դիվանագիտական ընդհանուր նշանակություն: Այն կատարված է պատշաճ գիտական մակարդակով, առկա են ծանոթագրություններ, գործածված տերմինների բացատրական բառարան, աղբյուրների ցանկում զետեղված են նաև 236 հազվագյուտ լուսանկարներ, որոնք, բացի պատմագիտականից, ունեն նաև գեղարվեստական արժեք:

